# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք, ՀՀ,
Արարատի մարզ, գ. Արևշատ, Հեռ. (0235)65234.
091203803.0917702 , arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՄԱՐ
ՌՈՒԲԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱ

N 11
*16 դեկտեմբեր 2016թ.*

Հարգելի մարզպետ պարոն՝ Ռ. Աբրահամյան

Կից ներկայացվում է Արևշատ համայնքի ավագանու հերթական թիվ-11 նիստի 37.38.և 39 որոշումները՝

Առդիր 11 թերթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Է. Փորթուգալյան*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 37 Ա

### ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13.12.2016ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ-11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Առաջնորդվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արևշատ համայնքի ավագանու թիվ- 11 նիստի օրակարգը.

1. Արևշատ համայնքի 2017 թվականի Տեղական Տուրքերի ԵՎ Վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.

2. Արևշատ համայնքի ղեկավարի աշխատավարձի, Համայնքապետարանի աշխատակազմի. Բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
4. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 38 Ն

### ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

Արևշատ համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել 2017 թվականի Տեղական Տուրքերի և Վճարների դրույքաչափերը՝ համաձայն թիվ-1 հավելվածի.

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից.

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
4. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈԳՈԼ ՆԻԿՈԼՅԱՆ

Հավելված 1
Արևշատ համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 13-ի N 38Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ.

*1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝*

*հիմնական օբյեկտների համար՝*

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 ՀՀ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20.000 ՀՀ դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 ՀՀ դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 ՀՀ դրամ.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ.

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 ՀՀ դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 ՀՀ դրամ:

*2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման,*

*աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝*

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 ՀՀ դրամ.

:

բ. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2.000 ՀՀ դրամ:

4. *Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝*

**1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝**

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 ՀՀ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.000 ՀՀ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.000 ՀՀ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7.000 ՀՀ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 ՀՀ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 ՀՀ դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.000 ՀՀ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 ՀՀ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.000 ՀՀ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7.000 ՀՀ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 ՀՀ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 ՀՀ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 50 ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 ՀՀ դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության

օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30.000 ՀՀ դրամ.

գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

*հիմնական շինությունների ներսում՝*

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 ՀՀ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 ՀՀ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 ՀՀ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7.000 ՀՀ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 ՀՀ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.001 ՀՀ դրամ,

*ոչ հիմնական շինությունների ներսում՝*

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 ՀՀ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 ՀՀ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 ՀՀ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 ՀՀ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 ՀՀ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12.000 ՀՀ դրամ:

6. *Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝*

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 ՀՀ դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 100.000 ՀՀ դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 200.000 ՀՀ դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 ՀՀ դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 ՀՀ դրամ:

7. *Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝*

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 ՀՀ դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500 ՀՀ դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 ՀՀ դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանել՝ տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված 25% չափով՝ 375 ՀՀ դրամ:

**7.2.** Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը այդ գովազդի մակերեսին համապատասխան՝150 ՀՀ դրամ:

**8.** Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 1.000 ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50.000 ՀՀ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 5.000 ՀՀ դրամ:

11. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0,5 գործակցով:

11. *Սահմանել հետևյալ տեղական վճարներ՝*

ա) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 ՀՀ դրամ.

բ) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ 2.000 ՀՀ դրամ.

գ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ 2.000 ՀՀ դրամ:

**Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել՝ 0 դրամ**

Աշխատակազմի քարտուղար Է. Փորթուգալյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Արևշատ, (0235)65234. 091203803.0917702, arevshat.ararat@mta.gov.am, arevshat.gp@mail.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 39 Ն

ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկլավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ ր 26-րդ կետերի համապատասխան.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արևշատ համայնքի ղեկավարի աշպատավարձը 270000/երկու հարյուր յոթանասուն հազար//ՀՀ դրամ.

2. Հաստատել Արևշատ համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն 1և 2 հավելվածների:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՐԱ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ
4. ՄԻԼԻՏՈՆՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՄԲԱՏ
6. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳՈԳՈԼ ՆԻԿՈՂՅԱՆ

Հավելված թիվ-1
2016թվականի դեկտեմբերի 13-ի թիվ-39-Ն որոշման

2017Թ-Ի ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԶԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը՝ 12
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 270000 |
| ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 117000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 72751 |
| | | |
| | | |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2 - 1/ | 1 | 170000 |
| Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3 -1/ | 1 | 150000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 77904 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 72751 |
| | | |
| ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ | | |
| Գրադարանավար մշակույթի տան տնօրեն | 1 | 72751 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Մշակույթի տան պահակ | 1 | 72751 |
| Աղբատար մեքենայի վարորդ | 1 | 72751 |
| Համայնքապետարան պահակ | 1 | 77904 |
| Հավաքարար | 1 | 76140 |

*Հավելված 2.*

*ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ 13*

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Տնօրեն | 1.0 | 148000 |
| Դաստիարակ | 0.56 | 72751 |
| Դաստիարակ | 0.56 | 77904 |
| Դաստիարակ | 0.56 | 77904 |
| Դաստիարակ | 0.56 | 77904 |
| Երաժ. դաստիարակ | 0.5 | 72751 |
| Դաստիարակի օգնական | 1.1 | 80026 |
| Դաստիարակի օգնական | 1.1 | 85695 |
| Խոհարար, | 1.0 | 72751 |
| Տնտեսվար /օժանդակ բանվոր/ | 1.0 | 77904 |
| դռնապահ/ լվացքարար | 1.0 | 85000 |
| Պահակ | 1.0 | 72751 |
| Հաշվապահ | 0.5 | 72751 |
| *ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ 13* | | |
| Երաժշտական դպրոցի տնօրեն<br>տնօրեն մասնագիտական | 1.0<br>0.4 | 75000<br>29120 |
| Ուսմասվար<br>մասնագիտական քանոն | 0.5<br>0.8 | 36400<br>58240 |
| Դաշնամուր | 1.53 | 111020 |
| Դաշնամուր | 1.45 | 113100 |
| Շվի- դուդուկ | 1.8 | 140400 |
| Դաշնամուր | 1.5 | 117000 |
| Տեսություն /սոլֆեջո/ | 0.98 | 70980 |
| Տեսություն /սոլֆեջո/ | 1.13 | 81900 |
| Վոկալ | 1.0 | 72800 |
| Ալտ -քամանչա | 1.3 | 101400 |
| դհոլ | 1.85 | 134600 |
| Հաշվապահ | 1.0 | 72800 |
| Հավաքարար | 1.0 | 56800 |

Աշխատակազմի քարտուղար Է. Փորթուգալյան